## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018

**Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման**

ք. Երևան <<29>> հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և 12.11.2015թ.-ին «Ծովագյուղի ՃՇՇ» և «Կապավոր» ՍՊ ընկերությունների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով գործող «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ն. Սիմոնյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2018թվականի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 3 հավելվածի:

1.4 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2018 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 152 127 641 (մեկ հարյուր հիսուներկու միլիոն հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1,2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ » ՓԲԸ
Հ/Հ 220203334978000
ՀՎՀՀ 08618778

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
<<      >> հունվարի 2018թ. կնքված
N ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018 համաձայնագրի

# Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2018թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| [redacted] | | | | | | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների | **47,944,598,0** | **41,488,602,0** | **36,878,757,0** | **25,815,684,0** | **152,127,641,0** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ » ՓԲԸ
Հ/Հ 220203334978000
ՀՎՀՀ 08618778

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<<    >> հունվարի 2018թ. կնքված
N ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018 համաձայնագրի

## Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների | 33,561,219,0 | 33,561,219,0 | 33,561,219,0 | 76,986,620,0 | 76,986,620,0 | 76,986,620,0 | 115,248,330,0 | 115,248,330,0 | 115,248,330,0 | 152,127,641,0 | 152,127,641,0 | 152,127,641,0 | 152,127,641,0 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ » ՓԲԸ
Հ/Հ 220203334978000
ՀՎՀՀ 08618778

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<      >> հունվարի 2018թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018 համաձայնագրի

**Սևանի տարածաշրջան Օովացյուղ ՃՇՇ ՍՊԸ**

2018 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Պահպանման ժամանակաշրջանը ՝ ՁՄԵՌ** | | | | | | | |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 51,2-կմ 73,2 | Միջպետական I | 22.00 | | Լավ | 22.00 | 1061.040 | 23342.880 |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 73,2-կմ80,92 | Միջպետական II-IV | 7.72 | | Լավ | 7.72 | 812.400 | 6271.728 |
| Գագարինի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 1.00 | | Լավ | 1.00 | 812.400 | 812.400 |
| Սևանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.69 | | Լավ | 2.69 | 812.400 | 2185.356 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ0-կմ1,1 | Միջպետական I | 1.10 | | Լավ | 1.10 | 1061.040 | 1167.144 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ1,1-կմ12.7 | Միջպետական II-IV | 11.60 | | Լավ | 11.60 | 812.400 | 9423.840 |
| Մ-14, Մ4-Շորժա-Վարդենիս կմ0-կմ12,2 | Միջպետական II-IV | 12.20 | | Միջին | 12.20 | 510.120 | 6223.464 |
| Հ-29 Սևան-Ծաղկունք-Ջովաբեր կմ0-կմ16,8 | Հանրապետական II-IV | 16.80 | | Միջին | 16.80 | 309.480 | 5199.264 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ-53, Մ4-Սեմյենովկա-Մ4 կմ0-կմ11,8 | Հանրապետական II-IV | 11.80 | | Բավարար | 11.80 | 296.880 | 3503.184 |
| Հ78, Մ4-Սևանի թերակղզի կմ0-կմ 1,5 | Հանրապետական II-IV | 1.50 | | Լավ | 1.50 | 974.040 | 1461.060 |
| Հ84, Մ4-Սևան-Մ4 կմ0-կմ1,1 | Հանրապետական II-IV | 1.10 | | Միջին | 1.10 | 309.480 | 340.428 |
| Ընդամենը | | 89.51 | | | 89.51 | | 59930.748 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 51,2-կմ 73,2 | Միջպետական I | 22.00 | Երաշխիք.Մե(0) | Լավ | 10.1 | 729.84 | 7371.384 |
| | | | Լավ ՄԼ(I) | Լավ | 7.00 | 1228.200 | 8597.400 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.00 | 2152.320 | 4304.640 |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 73,2-կմ 80,92 | Միջպետական II-IV | 7.72 | Լավ ՄԼ(I) | Լավ | 7.72 | 1038.240 | 8015.213 |
| Գագարինի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 1.00 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 1.00 | 1496.400 | 1496.400 |
| Սևանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.69 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.69 | 1496.400 | 4025.316 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ 0-կմ1.1 | Միջպետական I | 1.1 | Լավ ՄԼ(I) | Լավ | 1.1 | 1228.200 | 1351.020 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ1.1-կմ12.7 | Միջպետական II-IV | 11.60 | Լավ ՄԼ(I) | Լավ | 5.50 | 1038.240 | 5710.320 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 6.10 | 1496.400 | 9128.040 |
| Մ14, Մ4-Շորժա-Վարդենիս կմ0-կմ12.2 | Միջպետական II-IV | 12.20 | Լավ ՄԼ(I) | Միջին | 10.82 | 700.800 | 7582.656 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 1.38 | 1496.400 | 2065.032 |
| Հ29 Սևան-Ծաղկունք-Ջովաբեր կմ0-կմ16,8 | Հանրապետական II-IV | 16.80 | Լավ ՀԼ(I) | Լավ | 8.10 | 963.960 | 7808.076 |
| | | | Բավարար ՀԲ(II) | Միջին | 8.70 | 1304.640 | 11350.368 |
| Հ-52 Մ4-Սեմյենովկա-Մ4 կմ0-կմ11,8 | Հանրապետական II-IV | 11.80 | Երաշխիք.Հե(0) | Լավ | 0.70 | 454.920 | 318.444 |
| | | | Լավ ՀԼ(I) | Միջին | 7.40 | 710.160 | 5255.184 |
| | | | Բավարար | Բավարար | 3.70 | 1297.320 | 4800.084 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀԲ(II) | | | | |
| Հ78, Մ4-Սևանի թերակղզի կմ0-կմ 1,5 | Հանրապետական II-IV | 1.50 | Բավարար ՀԲ(II) | Միջին | 1.50 | 1304.640 | 1956.960 |
| Հ84, Մ4-Սևան-Մ4 կմ0-կմ1,1 | Հանրապետական II-IV | 1.10 | Լավ ՀԼ(I) | Լավ | 1.10 | 963.960 | 1060.356 |
| Ընդամենը | | 89.51 | | 86.61 | | | 92196.893 |
| | | | | | | | |
| Ընդամենը Սևանի տարածաշրջանով | | | | | | | 152127.641 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ » ՓԲԸ
Հ/Հ 220203334978000
ՀՎՀՀ 08618778

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 10*
<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ—15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<____>> հունվարի 2018 թ.

<<Ծովագյուղի ՃՇՇ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ն.Սիմոնյանի <<AK 0224290 050-ի կողմից տրված 29.01.2009 թվականին>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <Տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն>> ՊԿՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ—15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018>> ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ <<Ծովագյուղի ՃՇՇ>> ՍՊԸ
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ
Սպասարկող բանկի անվանումը,<<Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220203334978000
ՀՎՀՀ 08618778
տնօրեն՝ Ա. Սիմոնյան
________ (ստորագրություն)
գլխ. հաշվապահ՝
________ (ստորագրություն)

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" 2018__թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝<<Ծովագյուղի ՃՇՇ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝<<Ագրա-Կրեդիտ- Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 220203334978000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 08618778

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝02565518

10.Շահառուի բանկը՝Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/

12.Գումարը թվերով և բառերով ՝15 212 764 ՀՀ դրամ /տասնհինգ միլիոն երկու հարյուր տասներկու հազար յոթ հարյուր վաթսունչորս ՀՀ դրամ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝

15.Պայմանագրի ծածկագիրը՝ <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ—15/1-ՏԾԻԳ-16/1-26/2018>>

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝— էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները

/________________/

/________________/

19.բ.

Կ.Տ.

18.ա. Վճարողի ստորագրությունները՝

/________________/

/________________/

18.բ.

Կ.Տ.

Կատարված է շահառուի բանկի կողմից

20.ա. /________________/

/ստորագրություն/

20.բ. Կ.Տ.

"___" ___ 20___ թ.

Կատարված է վճարողի բանկի կողմից

21.ա. /________________/

/ստորագրություն/

21.բ. Կ.Տ.

22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*